600.0039.16.02.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 փետրվարի 2017 թվականի №39Ա

ք.Երևան

«ԷՆԵՐԳԱԻՄՊԷՔՍ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՓՈԽՀՈՍՔԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «զ» կետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը որոշում է.

1. Սահմանել, որ՝

   1) Հայաստանի Հանրապետության և Վրաստանի էլեկտրաէներգետիկական համակարգերի միջև էլեկտրական էներգիայի փոխհոսքերի (այսուհետ՝ Փոխհոսքեր) իրականացման գործառույթը վերապահվում է «ԷՆԵՐԳԱԻՄՊԷՔՍ» փակ բաժնետիրական ընկերությանը.

   2) Փոխհոսքերի իրականացումն ապահովում է «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» փակ բաժնետիրական ընկերությունը.

   3) Փոխհոսքերն իրականացվում են Հայաստանի Հանրապետությունում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության՝ սակագնային տարվա համար պլանավորված, ռեժիմների բարելավման և էլեկտրաէներգետիկական համակարգում ծախսերի նվազեցման նպատակով.

   4) Փոխհոսքերի իրականացման համար «ԷՆԵՐԳԱԻՄՊԷՔՍ» փակ բաժնետիրական ընկերությունը «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության հետ կնքում է էլեկտրական էներգիայի փոխանակման (առուվաճառքի) պայմանագիր.

   5) Փոխհոսքերի շրջանակում Վրաստան արտահանվող էլեկրական էներգիան «ԷՆԵՐԳԱԻՄՊԷՔՍ» փակ բաժնետիրական ընկերությունը գնում է

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունից՝ վճարելով «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից առաքվող էլեկտրական էներգիայի (կՎտժ) համար սահմանված սակագնային դրույքով.

6) Փոխհոսքերի շրջանակում Վրաստանից ներկրվող էլեկրական էներգիան «ԷՆԵՐԳԱԻՄՊԷՔՍ» փակ բաժնետիրական ընկերությունը վաճառում է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը՝ «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից առաքվող էլեկտրական էներգիայի (կՎտժ) համար սահմանված սակագնային դրույքով.

7) Փոխհոսքերի գործառույթի իրականացմամբ պայմանավորված՝ «ԷՆԵՐԳԱԻՄՊԷՔՍ» փակ բաժնետիրական ընկերության կրած ծախսերը փոխհատուցվում են «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից՝ սույն կետի 4-րդ ենթակետի համաձայն կնքված պայմանագրի հիման վրա.

8) Փոխհոսքերի շրջանակում մատուցվող՝ էլեկտրական էներգիայի հաղորդման, էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի և հաշվարկային կենտրոնի ծառայությունները համարվում են էլեկտրաէներգետիկական ներքին շուկային մատուցվող ծառայություններ՝ այդ ծառայությունները մատուցողների և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության հետ կնքված համապատասխան պայմանագրերի շրջանակում.

9) Փոխհոսքերի շրջանակում «ԷՆԵՐԳԱԻՄՊԷՔՍ» և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունների միջև էլեկտրական էներգիայի փոխանակության կետ է համարվում Հայաստանի Հանրապետության և Վրաստանի էլեկտրահաղորդման գծերի հատման կետը.

10) Փոխհոսքերի շրջանակում յուրաքանչյուր հաշվարկային ժամանակահատվածի համար «ԷՆԵՐԳԱԻՄՊԷՔՍ» փակ բաժնետիրական ընկերության կողմից ներքին շուկա առաքված և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից վճարման ենթակա, ինչպես նաև «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից առաքված և «ԷՆԵՐԳԱԻՄՊԷՔՍ» փակ բաժնետիրական ընկերության

կողմից վճարման ենթակա էլեկտրական էներգիայի հաշվառումն իրականացնում է «Հաշվարկային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
16 փետրվարի 2017թ.
ժամը 17[00]